

Հայաստանի Հանրապետության

օրենքը

Ընդունված է 2008թվականի հունիսի 17-ին

746 Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգրք/ 158-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասերով.

«Առևտրի իրականացման վայրերը, հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերը օրենսդրության համապատասխան կառուցված վճարովի և անվճար հասարակական զուգարաններով չապահովելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև յոթանասունապատիկի չափով:

Առևտրի իրականացման վայրը տեսակը հաստատված և ստուգաչափված ստուգիչ չափման միջոցներով չապահովելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

Վաճառվող հացի գնապիտակի վրա մեկ միավոր հացի քաշը և դրա շեղումների թույլատրելի չափերը չնշելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով:

Հոդված 2. Օրենսգրքի 327.1-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի «2008» թիվը փոխարինել «2011» թվով:

Հոդված 3. Օրենսգրքի 327.1-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ և 3-րդ մասերով.

«2. Օրենսգրքի 158-րդ հոդվածի 23-րդ մասը ուժի մեջ է մտնում՝

ա) 2009թվականի հուլիսի 1-ից Հայաստանի Հանրապետության բնակավայրերում գործող առևտրի իրականացման վայրերի և հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերի համար.

բ) 2008թվականի հոկտեմբերի 1-ից Հայաստանի Հանրապետության բնակավայրերից դուրս՝ միջպետական, հանրապետական և միջհամայնքային նշանակության ճանապարհներին գործող առևտրի իրականացման վայրերի և հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերի համար:

3.Օրենսգրքի 158-րդ հոդվածի 24-րդ մասը ուժի մեջ է մտնում 2008 թվականի հոկտեմբերի 1-ից:

Հայաստանի Հանրապետության

Նախագահ

Ս. Սարգսյան

2008թ հուլիսի 8

Երևան ՀՕ -120-Ն